

Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄՆԵՐ

ՏԵԽՆՈԼՈԳԻԱ 1

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐՔ-ՏԵՏՐԻ
ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱՐ

Երևան - 2023

ՀՏԴ

ԳՄԴ

Սվաջյան Ա. Հ., Օրոյան Ն. Ա., Պետրոսյան Ս. Ս., Օհանյան Հ. Վ., Ուսումնական նյութերի հարմարեցումներ: Տեխնոլոգիա 1 աշխատանքային գիրք-տետրի մեթոդական ուղեցույց ուսուցչի համար, Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, Եր.: Էդիթ Պրինտ, 2023, 45 էջ

Մեթոդական ուղեցույցը երաշխավորվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի կողմից՝ որպես ուսումնական նյութ:

Մեթոդական ուղեցույցը հրատարակության է երաշխավորվել Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի խորհրդի կողմից:

Մասնագիտական խմբագիր՝

Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Սվաջյան Ա.Հ.

Գրախոսներ՝

Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Ազատյան Թ.Յու.

Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Մուրադյան Ս.Վ.

Հեղինակներ՝

Սվաջյան Ա. Հ., մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

Օրոյան Ն. Ա., տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ

Պետրոսյան Ս. Ս.

Օհանյան Հ. Վ.

Համակարգչային ձևավորում՝ Խուրավերդյան Դ. Գ., Դավթյան Հ. Լ.

Խմբագիր՝ Մարգարյան Հ. Ա.

Սույն ուղեցույցի նպատակը հանրակրթական ուսումնական հաստատությունների առաջին դասարանի «Տեխնոլոգիա 1» աշխատանքային գիրք-տետրի կիրառության գործընթացում ուսուցիչներին մեթոդական աջակցության տրամադրումն է:

ISBN

ՀՏԴ

ԳՄԴ

Տպաքանակ՝ 150 օրինակ

© Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, 2023

Բովանդակություն

Հարմարեցումների դերը «Տեխնոլոգիա» առարկայի դասավանդման համատեքստում.....	4
«Տեխնոլոգիա» առարկայի առաջադրանքների մեթոդական մշակումներ	22
Օգտագործված գրականության ցանկ	44

Հարմարեցումների դերը «Տեխնոլոգիա» առարկայի դասավանդման համատեքստում

Հայաստանի Հանրապետությունը համընդհանուր ներառական կրթությունը հռչակում է որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք: Ներառական կրթության քաղաքականությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր երեխայի կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովմանը: Մույնով Հանրակրթության մասին օրենքը (ՀՕ-136-Ն) հստակեցնում է, որ դպրոցի ողջ մանկավարժական անձնակազմը պատասխանատու է ԿԱՊԿ ունեցող սովորողների կրթական գործընթացն ապահովելու համար: Անձնակազմը պետք է լիարժեք տիրապետի ԿԱՊԿ ունեցող սովորողներին բացահայտելու, նրանց կարիքները գնահատելու և կրթական գործընթացն ապահովելու ընթացակարգերին, պետք է օգնի ԿԱՊԿ ունեցող սովորողներին՝ հաղթահարելու կրթական գործընթացին մասնակցելու և սովորելու խոչընդոտները, և անհրաժեշտ փոխություններ կատարի նրանց՝ դպրոցական կյանքի բոլոր բնագավառներում ներառելու համար:

Հաճախ ԿԱՊԿ ունեցող երեխաների ուսուցման ընթացքում ակտիվ մասնակցության և ուսումնառության բարձր արդյունավետության ապահովման համար անհրաժեշտ են հատուկ ընտրված դասավանդման մեթոդներ, ուսումնական նյութերի հարմարեցումներ, լրացուցիչ ուսումնական նյութեր, գիտելիքների ստուգման նոր և ավելի ճկուն ձևեր: Հաճախ միայն դասագրքերի կիրառումը բավարար չէ այս երեխաներին անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ փոխանցելու համար:

Կրթության իրավունքը իրացնելու համար անհրաժեշտ խելամիտ հարմարեցումների մասին նշվում է նաև ՀՀ

կառավարության 2022 թվականի օգոստոսի 11-ի N 1265-Ն որոշման մեջ, որտեղ սահմանվել է Խելամիտ հարմարեցումներ ապահովելու կարգը, որում մեծ դեր է վերապահված կրթության ոլորտում համընդհանուր ներառականության ապահովմանը՝ որպես կրթական քաղաքականության առաջնային ուղղության: Որոշման համաձայն՝ Խելամիտ հարմարեցումները նախատեսված են այն անձանց համար, ովքեր ունեն հաշմանդամությամբ պայմանավորված գործառնականության սահմանափակում ուսումնական գործընթացին մյուսների հետ հավասար հիմունքներով մասնակցություն ցուցաբերելու առումով: Հետևաբար, ուսումնական ծրագիրն անփոփոխ չի կարող մնալ, այն պետք է համապատասխանեցվի բոլոր սովորողների կրթական կարիքներին:

Ուսուցիչները պետք է սահմանեն համապատասխան ուսումնական մարտահրավերներ՝ երեխաների ուսումնառության և գնահատման հնարավոր խոչընդոտները հաղթահարելու համար: Այս սկզբունքները հնարավորություն են ընձեռում հատկորոշել ԿԱՊԿ ունեցող սովորողների ուսուցման նպատակները, որոնք կարող են տարբերվել մյուս սովորողների նպատակներից, կամ փոփոխել ուսումնական ծրագիրը՝ վերացնելու համար խոչընդոտները, որպեսզի բոլոր սովորողներն իրենց հնարավորությունների սահմանում յուրացնեն ուսումնական ծրագիրը:

ԿԱՊԿ ունեցող սովորողների կրթական գործընթացի պլանավորումը ընդհանուր կրթական գործընթացի պլանավորման բաղկացուցիչ մասն է և չպետք է դիտարկվի որպես առանձին գործողություն: Այն չպետք է բարդ կամ ժամանակատար լինի: Կարելի է պարզապես ծրագրերում համառոտ նշումներ անել ուսումնական դժվարությունների և նպատակների մասին, ինչպես նաև՝ պլանավորված մոտեցումների վերաբերյալ, որոնք

կիրառվելու են ԿԱՊԿ ունեցող սովորողների առջև ծառայող հնարավոր խոչընդոտները վերացնելու համար: Ուսումնական նպատակին հասնելու համար կարող է նպատակահարմար լինել ավելի փոքր քայլերի պլանավորումը կամ լրացուցիչ ռեսուրսների տրամադրումը, հնարավորության դեպքում կարելի է օգտվել նաև ուսուցչի օգնականի աջակցությունից:

❖ Ինչո՞ւ է «Տեխնոլոգիա» առարկան կարևոր ԿԱՊԿ ունեցող սովորողների համար

2021 թվականին «Ներառում Հայաստան» կազմակերպության և Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի կողմից իրականացված «Հարմարեցված ուսումնական նյութերի ներդրումը համընդհանուր ներառական կրթության համակարգում» փորձարարական ծրագրի շրջանակներում ՀՀ 11 հանրակրթական դպրոցների ուսուցիչների շրջանում անցկացված հարցումների արդյունքում ևս պարզ է դարձել, որ ԿԱՊԿ ունեցող երեխաներն ավելի ակտիվ մասնակցություն են ունենում և ավելի շատ են հաջողում հենց «Տեխնոլոգիա» առարկայի դասաժամերին: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ առարկաներին պատրաստվելը և դրանց հանդեպ հետաքրքրությունը երեխաների մոտ ձեռքբերումների հետ է զուգորդվում: Առհասարակ, առաջընթացի զգացումը և ուսման հանդեպ պատասխանատու մոտեցումը սովորողների վրա դրական է անդրադառնում: Նրանք հաճույք են ստանում գործնականում իրենց գաղափարները կիրառելուց: Բացի այդ, նրանց անձնական ներգրավվածությունը դրական ազդեցություն է ունենում ուշադրության կենտրոնացման, համբերատարության, հաստատակամության և նվիրվածության վրա:

Մեծ Բրիտանիայի «Կրթական չափորոշիչների գրասենյակի» (OFSTED) համաձայն՝ ԿԱՊԿ ունեցող սովորողների մոտ ավելի մեծ առաջընթաց է գրանցվում «Տեխնոլոգիա» առարկայից: Ավելին, մասնագետները նշում են, որ ԿԱՊԿ ունեցող սովորողները այս առարկայից կարող են հասնել նույն արդյունքներին, ինչ իրենց հասակակիցները, կամ նույնիսկ գերազանցել նրանց: «Տեխնոլոգիա» առարկան այս սովորողներին հնարավորություն է տալիս առաջընթացի այնպիսի զգացում ունենալ, ինչն այնքան էլ հաճախ չի պատահում դպրոցական կյանքում: Օրինակ՝ դիվերսիա ունեցող երեխաների համար մաթեմատիկան, ինչպես նաև գրաճանաչության դասերը կարող են դժվար լինել, իսկ այնպիսի գործնական առարկաները, ինչպիսիք են կերպարվեստը և տեխնոլոգիան, կարող են կառուցողական և կրթական այլընտրանք հանդիսանալ՝ ստեղծելով առաջընթաց արձանագրելու կառուցողական հնարավորություններ:

«Տեխնոլոգիան» կարևոր առարկա է ԿԱՊԿ ունեցող սովորողների համար (Warnock Report 1978): Այն օգնում է ձեռք բերել գիտելիքներ, զարգացնել թվաբանության, գրագիտության և հաղորդակցման հմտությունները, որոնք կարող են կիրառվել նաև գործնականում: Այն ամբողջացնում է մյուս առարկաներից ձեռք բերած հմտությունները, ամրապնդում ուսուցման գործընթացը՝ նպաստելով դրական արդյունքների գրանցմանը: Հաշվի առնելով վերոնշյալը՝ կարևոր է «Տեխնոլոգիա» առարկայի ուսումնական ծրագիրն այնպես պլանավորել և դասավանդել, որ այն համապատասխանի տարբեր առանձնահատկություններ ունեցող սովորողների կրթական կարիքներին:

Անհրաժեշտության դեպքում կարևոր է հարմարեցնել սենյակները, կիրառել մեծահասակների աջակցությունը, լրացուցիչ ժամանակ տրամադրել առաջադրանքների կատարման համար, օգտագործել աջակցող սարքեր և այլն: Թեև ուսուցիչների համար

լուրջ մարտահրավեր է առարկայի բովանդակային և գործնական հարմարեցումը ԿԱՊԿ ունեցող սովորողների կրթական կարիքներին, բազմաթիվ են օրինակներն առ այն, թե ուսումնական ծրագրերն ինչպես են հարմարեցվում տարբեր երեխաների կրթական կարիքներին, թե «Տեխնոլոգիա» դասավանդող ուսուցիչների հնարամտությունն ու ստեղծագործականությունը որքան արդյունավետ կարող են լինել ԿԱՊԿ ունեցող երեխաների կրթական դժվարությունների հաղթահարման տեսանկյունից և թե ինչպես են նրանք առաջնահերթ հաշվի առնում սովորողների կրթական կարիքները:

ԿԱՊԿ ունեցող սովորողների համար տարբեր պատկերների և առարկաների պատրաստման աշխատանքները հաճախ կարող են դժվարություններ առաջացնել: Ուստի սովորողների ներգրավվածությունը մեծացնելու համար անհրաժեշտ է հասկանալ, թե ինչպես օգնել սովորողներին առաջադրանքների կատարման ժամանակ: Ուսուցիչները պետք է խուսափեն կտրուկ մոտեցումներից, երբ խոսքը վերաբերում է սովորողների կողմից նոր գաղափարների ներկայացման, յուրատիպ դիզայնի նախագծման, գործողությունների հաջորդականության իրականացման և այլ հարցերին: Հարկավոր է խրախուսել երեխաներին, որպեսզի նրանք ինքնուրույնաբար, հնարավորինս անկախ կատարեն առաջադրանքները: Գաղափարները մտապահելու համար կարելի է առաջարկել թերթիկների վրա նշել բանալի բառերը, կիրառել գծապատկերներ և նախագծման տեսողական թերթիկներ, որոնք քայլ առ քայլ բացատրում են գործընթացը: Հետազոտությունները փաստում են, որ ավանդաբար ԿԱՊԿ ունեցող սովորողների համար կիրառվող դասավանդման մեթոդները բաղկացած են ընդհանուր դասավանդման մեջ կիրառվող, սակայն որոշ անհատների կամ սովորողների խմբերի համար՝ ընդլայնված կամ

ընդգծված մոտեցումներից (Davis and Florian, 2004): Սա վերաբերում է նաև այն դեպքերին, երբ դասավանդման մոտեցումները կարող են բավական տարբեր լինել, օրինակ, երբ ուսուցիչներն աշխատում են ավելի բարդ խնդիրներ ունեցող սովորողների հետ:

Առհասարակ, «Տեխնոլոգիա» առարկան դրական ազդեցություն է ունենում սովորողների կրթական փորձառության վրա: «Տեխնոլոգիայի» շնորհիվ նրանք համատեղում են գործնական և տեխնոլոգիական հմտությունները ստեղծագործական մտածողության հետ մարդկային պահանջմունքերին համապատասխան արտադրանքներ նախագծելու և ստեղծելու համար: Նրանք սովորում են օգտագործել ժամանակակից տեխնոլոգիաները և փորձում հասկանալ ապագա տեխնոլոգիական զարգացումների ազդեցությունը: Տեխնոլոգիան սովորեցնում է ստեղծագործաբար մտածել և գործել կյանքի որակը բարելավելու համար՝ լուծելով խնդիրները որպես անհատներ և թիմի անդամներ:

Աշխատելով խրախուսող, բարենպաստ միջավայրում, որն ընձեռում է բազմաթիվ հնարավորություններ, սովորողները բացահայտում են իրենց կարիքներն ու ներուժը: Անհրաժեշտության դեպքում նրանք հանդես են գալիս նոր ու հետաքրքիր գաղափարներով և աշխատանքներով: Նրանք համատեղում են գործնական և մտավոր հմտությունները գեղագիտական, տեխնիկական, մշակութային, առողջապահական, սոցիալական, հուզական, տնտեսական, արդյունաբերական և բնապահպանական հիմնահարցերի ընկալման հետ: Այսպիսով, նրանք գնահատում են նոր և նախկին տեխնոլոգիան, ինչպես նաև դրանց կիրառման եղանակներն ու ազդեցությունը, դրանք համադրելու հնարավորությունները: «Տեխնոլոգիա» առարկայի միջոցով սովորողները վստահություն են ձեռք բերում գործնական հմտություններն օգտագործելիս և սկսում ողջամտորեն կիրառել

իրերը: Նրանք իրացնում են իրենց ստեղծագործական մտածողությունը և սովորում նորարարություն անել:

❖ **«Տեխնոլոգիա» առարկայի ուսումնական ծրագրի իրականացման ընթացքում ի հայտ եկող խոչընդոտների վերացումը, ուսուցումը և ուսումնառությունը ԿԱՊԿ ունեցող սովորողների համար**

«Տեխնոլոգիա» առարկայի դասերը ներառական ուսուցման ծրագրերին համապատասխանեցնելու համար կարևոր է, որ ուսուցիչը դասը պլանավորելիս հաշվի առնի, թե ի՞նչը կարող է խոչընդոտնել ԿԱՊԿ ունեցող սովորողին դասին ներգրավվելու և ուսումնական նյութը յուրացնելու գործընթացում: Պլանավորման ժամանակ հարկավոր է դիտարկել այդ խոչընդոտները նվազագույնի հասցնելու ուղիները, որպեսզի բոլոր սովորողները կարողանան լիարժեք մասնակցել դասին և սովորել:

ԿԱՊԿ ունեցող սովորողները որոշ առաջադրանքներ կարող են կատարել ինքնուրույն, մյուս դեպքերում հարկավոր է որոշ հարմարեցումներ կամ փոփոխություններ կատարել: Կան առաջադրանքներ, որոնք կարելի է հանձնարարել կատարել դասընկերների հետ միաժամանակ, որպեսզի նրանք կարողանան զուգահեռաբար աշխատել նույն նպատակների ուղղությամբ, բայց այլ կերպ, օրինակ՝ համակարգչի կիրառմամբ: Երբեմն էլ ԿԱՊԿ ունեցող սովորողները պետք է նույն թեմայի վերաբերյալ այլ առաջադրանքների վրա աշխատեն: Այս առումով գիրք-տետրը կարող է առաջադրանքների հարմարեցման հիանալի օրինակ հանդիսանալ և դառնալ ուղենիշ ուսուցիչների համար:

Ներառական ուսումնական միջավայրի պահպանում

<p>Հարմարեցումների օրինակելի ձև</p>	<p>Հարմարեցումներ «Տեխնոլոգիա» առարկայի համար</p>
<p>Ձայնի և լույսի հետ կապված հարմարեցումներ</p> <ul style="list-style-type: none"> • Նվազեցնել ֆոնային աղմուկը և արձագանքը, • անհրաժեշտության դեպքում նվազեցնել վառ լուսավորությունը, • ապահովել բավարար լուսավորություն գրավոր աշխատանքը կատարելու, ուսուցչի դեմքը տեսնելու համար, • անհրաժեշտության դեպքում համոզվել, որ սովորողները կրում են լսողական և տեսողական սարքեր, • տեսանյութերում ներառել ենթագրեր լսողության խանգարում, հաղորդակցման դժվարություններ ունեցող սովորողների համար: 	<p>Ձայնի և լույսի հետ կապված հարմարեցումներ</p> <ul style="list-style-type: none"> • Հարկավոր է խուսափել քննարկումներից, երբ սարքերն աշխատում են: • «Տեխնոլոգիա» առարկայի դասերի ժամանակ աղմուկը կարող է անհարմարավետության զգացողություն առաջացնել լսողության խանգարում ունեցող սովորողների համար: • Գործնական առաջադրանքը կատարելիս սովորողները կարող են անջատել իրենց օժանդակ սարքերը, եթե միջավայրը շատ աղմկոտ է (հարկավոր է հիշեցնել նրանց, որ հետո նորից միացնեն): • Հարկավոր է խուսափել լույսի

	<p>աղբյուրների, օրինակ՝ պատուհանների առջև կանգնելուց:</p>
<p>Դասարանային Միջավայր</p> <ul style="list-style-type: none"> • Հարմարեցնել սովորողների համար նախատեսված նստարանների և հիմնական գրատախտակի դիրքը՝ հաշվի առնելով սենյակի ձևը: • Համոզվել, որ սովորողները հստակ տեսնում և լսում են ուսուցչին, միմյանց, գրատախտակը, էկրանը և այլն: • Ընտրել այնպիսի նստարաններ, որոնք դասընկերոջ կամ մեծահասակի օգնության հնարավորություն կստեղծեն: • Անհրաժեշտ տարածք տրամադրել շարժունակության դժվարություններ ունեցող սովորողներին՝ սարքավորումներն ու նյութերը տեղավորելու 	<p>Դասարանային միջավայր «Տեխնոլոգիա» առարկայի համար</p> <ul style="list-style-type: none"> • Որևէ բան ցույց տալիս հարկավոր է այնպես անել, որ բոլորին տեսանելի լինի. անհրաժեշտ է ընտրել դրա համար հարմար, մաքուր և կոկիկ տարածք: • Հնարավորիս կիրառել հարմարեցվող սեղաններ, լվացարաններ, աշխատելու համար նախատեսված հարթություններ, որոնց բարձրությունը կարելի է փոփոխել՝ գործողությունները հեշտացնելու նպատակով: • Նստարանները տեղադրել այնպես, որպեսզի քննարկումների ժամանակ բոլոր սովորողները հաղորդակցվեն, արձագանքեն միմյանց, շփվեն միմյանց և ուսուցչի հետ:

<p>համար:</p> <ul style="list-style-type: none"> • Ընտրել ճիշտ աթոռներ և գրասեղան, օրինակ՝ սեղաններ, որոնց բարձրությունը կարելի է փոփոխել: 	<ul style="list-style-type: none"> • Հարկավոր է խուսափել շատ տեղեկություններ փոխանցելուց: • Ինտերակտիվ գրատախտակների վրա գրառումները կարելի է տպել և տրամադրել բոլոր սովորողներին:
<p>Ռեսուրսներ</p> <ul style="list-style-type: none"> • Առաջադրանքները մատչելի դարձնելու համար կարելի է օգտագործել մասնագիտացված օժանդակ միջոցներ, օրինակ՝ նկարներ, գունային կողավորում, մեծ տառատեսակ, Բրայլի գրեր, կտրելու համար նախատեսված սարքեր, ձևանմուշներ, նախշեր, պատրաստի մասեր, զսպանակավոր կամ էլեկտրական մկրատ և ընդհանուր օժանդակ միջոցներ, օրինակ, մատիտներ, եթե սովորողներն ունեն ձեռքի շարժման կառավարման խնդիրներ, չսահող 	<p>Ռեսուրսներ</p> <ul style="list-style-type: none"> • Անհրաժեշտ են դարակներ իրերը, գործիքները հեշտությամբ գտնելու և տեղավորելու համար: • Անհրաժեշտ են թեմային առնչվող իրազննական նյութեր, նկարներ: • Հարկավոր է չեզոք ուսումնական միջավայր և տարածք ստեղծել դրա կարիքն ունեցող սովորողների համար: • Անհրաժեշտ է ունենալ բոլոր անհրաժեշտ նյութերը դասապրոցեսից շեղվելու հավանականությունը նվազագույնի հասցնելու համար:

<p>հարմարանքներ թղթերը, գրքերը և սարքավորումները վրան տեղադրելու համար:</p>	
---	--

Լրացուցիչ աջակցություն մեծահասակների կողմից

<p>Լրացուցիչ աջակցություն մեծահասակների կողմից</p>	<p>Լրացուցիչ աջակցություն մեծահասակների կողմից «Տեխնոլոգիա» առարկայի շրջանակում</p>
<ul style="list-style-type: none"> • Աջակցության պլանավորում • Մեծահասակների կողմից ցուցաբերվող լրացուցիչ աջակցության տրամադրման նպատակն է աջակցել սովորողների ուսումնառությանը՝ միևնույն ժամանակ հնարավորություն ընձեռելով նրանց ինքնուրույն աշխատել: • Պլանավորման մեջ նշել, թե ում/անհատ կամ խումբ/, երբ և ինչ տեսակի աջակցություն պետք է ցուցաբերվի, և երբ կարող են սովորողներն ինքնուրույն աշխատել: • Համոզվել, որ աջակցող 	<ul style="list-style-type: none"> • Աջակցության պլանավորումը կարող է ներառել գործողությունների իրականացում ցուցումներով, որպեսզի սովորողները կարողանան զբաղվել որոշակի գործնական աշխատանքներով, օրինակ՝ դիզայնի գաղափարները գծանկարի վերածելով: • Անհրաժեշտության դեպքում մեծահասակի աջակցությամբ ԿԱՊԿ ունեցող սովորողները պետք է օգտագործեն գործիքներն ու սարքավորումները վերջնարդյունքին հասնելու

<p>մասնագետները հստակ տեղեկացված են դասի նպատակների, հաջորդականության մասին, տիրապետում են դասի բովանդակությանը, գիտեն՝ ինչպես բաժանել առաջադրանքը մի քանի մասի՝ այն ավելի հեշտ կատարելու համար:</p> <ul style="list-style-type: none"> • Աջակցող մասնագետները կարող են բանալի հարցեր տալ սովորողներին ձևավորող գնահատումը խրախուսելու համար, և, անհրաժեշտության դեպքում, ծանոթ են օժանդակ սարքերին սովորողներին օգնելու համար: • Տեղեկացնել աջակցող մասնագետներին առաջադրանքի կատարման կարգի և նշանակության, ինչպես նաև այն հմտությունների և գիտելիքների մասին, որոնք անհրաժեշտ է բարելավել: • Տեղեկացնել աջակցող մասնագետներին 	<p>համար:</p> <ul style="list-style-type: none"> • Հարկավոր է խրախուսել աջակցող մասնագետներին՝ նպաստել սովորողների ինքնուրույնությանը՝ ուղղորդելով նրանց և այնպիսի հարցեր տալով, որոնց շնորհիվ սովորողներն ինքնուրույն կաշխատեն: Նրանք չպետք է մտածեն, որ մեծահասակներն իրենց փոխարեն ամեն ինչ կանեն. հստակ սահման կա միջամտության և առաջադրանքն ամբողջությամբ կատարելու միջև: Մեծահասակի և/կամ դասընկերոջ կողմից աշխատանքի ընթացքում օգնությունն անգնահատելի է և օգնում է նրանց՝ անվտանգ սովորել և կիրառել հմտությունները:
---	--

<p>առողջության և անվտանգության կանոնների մասին:</p>	
<p>Ուսուցիչների հաղորդակցություն</p> <ul style="list-style-type: none"> • Խոսել պարզ, հստակ և հասկանալի նախադասություններով: • Ընդգծել բանալի բառերը, բացատրել դրանց իմաստները և խորհրդանիշները, գրել հասանելի ձևով: • Հրահանգները տալ պարզ և, անհրաժեշտության դեպքում, տեսանելի, ակնառու կերպով: • Հարցերը ձևակերպելիս խուսափել բարդ բառեր և նախադասություններ կիրառելուց: • Հարցերը կազմել տարբեր ձևերով, տարբեր մակարդակներին համապատասխան՝ 	<p>Ուսուցիչների հաղորդակցություն «Տեխնոլոգիա» առարկայի շրջանակում</p> <ul style="list-style-type: none"> • Մենյակում տեղադրված ցուցանակները, բանալի բառերի ցուցակները, պաստառները և այլ նյութերը կարող են օգնել սովորողներին ճանաչել և ճիշտ արտասանել կարևոր իրերի և գործիքների անունները: • Կարող են օգտակար լինել նաև հիմնական գործընթացների գծապատկերները, ժամանակացույցը: • Սկզբում սովորողներին կարելի է բաց հարցեր տալ պատասխանների միջոցով նրանց կրթական մակարդակը հասկանալու

<p>պայմանավորված սովորողների զարգացման առանձնահատկություններով. սա հնարավորություն է տալիս բոլոր սովորողներին պատասխանել բաց հարցերին:</p> <ul style="list-style-type: none"> • Սովորողների հաղորդակցման կարիքները բավարարելու համար անհրաժեշտության դեպքում օգտագործել հաղորդակցման այլընտրանքային եղանակներ, օրինակ՝ ժեստեր, Բրայլի գրեր, տեքստեր, զննական պարագաներ, օժանդակ սարքեր, և այլն: • Կրթական կարիքին համապատասխան՝ որոշ սովորողների համար կարող են անհրաժեշտ լինել տպագիր նյութեր (տառատեսակ, չափ, Բրայլի գրեր), մյուսներին կարող են անհրաժեշտ լինել պարզեցված գծային պատկերներ կամ դրանք պատկերող նկարներ: 	<p>համար, օրինակ. «Այս թեյի սեղանին ի՞նչն է պակասում»: Եթե սովորողները դժվարանում են պատասխանել, հարկավոր է ներկայացնել այլ տարբերակներ:</p>
--	--

**Սովորողների
հաղորդակցություն**

- Հնարավորություն տալ կիրառել հաղորդակցման այլընտրանքային եղանակներ, օրինակ՝ քարտեր, հաղորդակցման գրքույկներ, հավելվածներ:
- Դասերի ընթացքում հաղորդակցման նման մեթոդները լավագույն կերպով կիրառելու նպատակով խորհրդակցել լոգոպեդիների, համապատասխան մասնագետների, խորհրդատուների և/կամ այլ սովորողների հետ:
- Կատարած աշխատանքի և փորձերի վերաբերյալ կազմակերպել քննարկումներ, որպեսզի սովորողներն ավելի լավ հասկանան:
- Անհրաժեշտության դեպքում, սովորողներին ժամանակ

**Սովորողների
հաղորդակցություն
տեխնոլոգիա առարկայի
համար**

- Սովորողները կարող են նպաստել վերջնական արտադրանքի գնահատմանը, եթե դա անհրաժեշտ է, օգտագործելով պարզ ընտրության քարտեր հատուկ բառերով և/կամ նշաններով, օրինակ՝ հավանել/չհավանել, պարզ դասակարգման թերթիկներ և այլն:
- Կարևոր է քաջալերել, գովել, խրախուսել, որպեսզի սովորողը շարունակի կատարել հանձնարարությունը:
- Շատ սովորողների համար ավելի հեշտ է խոսել այն մասին, թե ինչ են արել, քան՝ ինչ են պլանավորում անել: Հենվելով սրա վրա, կարելի է զարգացնել այս հմտությունը, օրինակ՝ ասելով. «Այսօր ձեռնարկով հետաքրքիր նապաստակ պատրաստեցիր,

<p>տրամադրել, նախքան հարցերին բանավոր պատասխանելը, զույգերով քննարկել հարցերի պատասխանները:</p> <ul style="list-style-type: none"> • Խոսքի խանգարումներ ունեցող սովորողներին, մինչ պատասխանելը, ժամանակ տալ մտածելու, իրենց պատասխանը բացատրելու համար: • Թույլ տալ աջակցող մասնագետներին օգնել սովորողներին ճիշտ արձագանքել: 	<p>արի մտածենք՝ ինչ ենք պատրաստելու հաջորդ դասին»:</p>
<p>Սովորողների խմբավորում</p> <ul style="list-style-type: none"> • Խմբավորման բոլոր ձևերում ներառել ԿԱՊԿ ունեցող սովորողներին: • Խմբերում ընդգրկել տարբեր կարողություններ ունեցող երեխաների, բացառությամբ այն դեպքերի, երբ այլ նպատակներ են սահմանված: • Հստակ ազդարարել անցումը 	<p>Սովորողների խմբավորում «Տեխնոլոգիա» առարկայի համար</p> <ul style="list-style-type: none"> • Արտադրանք նախագծելն ու առաջադրանքներ կատարելը հնարավորություն է ընձեռում սովորողներին աշխատել ինքնուրույն կամ որպես թիմի անդամ՝ սովորելով ուրիշների աշխատանքից: Օրինակ՝ աուտիզմ ունեցող սովորողների համար մյուս

խմբային կամ ինքնուրույն աշխատանքի և հակառակը: Մա հատկապես օգտակար է աուտիզմ ունեցող սովորողների համար:

- Սովորողներին տալ հատուկ դերեր (օրինակ՝ գրող, զեկուցող, դիտորդ), համաձայն որոնց բոլոր սովորողները պետք է առանց շեղվելու որոշակի առաջադրանքներ կատարեն: Ձույգերով և փոքր խմբային քննարկումները հնարավորություն են ընձեռում բոլոր սովորողներին մասնակցել դասընթացին: Սակայն դասարանում քննարկման աշխատանքի համար անհրաժեշտ խոսքը կարող է խոչընդոտ լինել այն սովորողների համար, ովքեր դժվարանում են բարձրաձայն արտահայտել իրենց մտքերը: Նման դեպքերում անհրաժեշտ է նախօրոք պլանավորել նրանց մասնակցությունը:

սովորողների հետ նոր գաղափարներ գեներացնելը կարող է դժվար լինել: Ձույգերով կամ խմբային աշխատանքների դեպքում հարկավոր է հաշվի առնել այս հանգամանքը: Միննույն ժամանակ, կարևոր է ուշադրություն դարձնել, թե ինչպես է երեխան իրեն զգում խմբում. եթե տեսնում եք, որ հանգիստ է և չի լարվում, կարելի է նրան աստիճանաբար ավելի շատ ներգրավել խմբային աշխատանքներում:

**Պատասխանատվության
ձևավորում**

- ԿԱՊԿ ունեցող սովորողներին հնարավորություն ընձեռել համապատասխան աջակցությամբ ներգրավվել դասարանի կառավարման և որոշումների կայացման գործընթացում:
Անհրաժեշտ է, որ վերջիններս ստանձնեն որոշակի պատասխանատվություններ և դերեր:

«Տեխնոլոգիա» առարկայի առաջադրանքների մեթոդական մշակումներ

Սույն մեթոդական ուղեցույցը մշակվել է «Տեխնոլոգիա» աշխատանքային գիրք-տետրին կից առաջադրանքների մեթոդական սկզբունքների, ԿԱՊԿ ունեցող երեխաների համար դրանց իրականացման առանձնահատկությունների մեկնաբանման և արդյունավետ կիրառումն ապահովելու նպատակով:

«Տեխնոլոգիա» առարկան ներառում է երեխայի անհատականության զարգացման անսպառ հնարավորություններ: Այն բարենպաստ միջավայր է երեխաների կրթության և դաստիարակության, անհրաժեշտ աշխատանքային և գեղարվեստական հմտությունների ձևավորման համար և նպաստում է երեխայի սոցիալական հարմարմանը ժամանակակից հասարակության մեջ:

«Տեխնոլոգիա» աշխատանքային գիրք-տետրը բաղկացած է երկու մասից՝ հիմնական առաջադրանքներից և դրանց կից հավելվածներից: Գիրք-տետրում տեղ գտած տարբեր առաջադրանքների կատարումը ակտիվացնում է երեխաների ուշադրությունը, հիշողությունը, երևակայությունը, մտածողությունը և խոսքը, նպաստում ընդհանուր ստեղծագործական կարողությունների զարգացմանը:

«Տեխնոլոգիա» աշխատանքային գիրք-տետրի կարևոր նպատակներից է երեխաների մոտ ձևավորել իրերի, աշխարհի մասին սկզբնական պատկերացումների համակարգ մարդու կողմից ստեղծված «երկրորդ բնության» մասին:

Աշխատանքային գիրք-տետրը ներառում է առաջադրանքներ, որոնք համապատասխանում են «Տեխնոլոգիա» առաջին

դասարանի աշխատանքային տետրի¹ տրամաբանությանը, որոնք ընդգրկում են դասընթացի բոլոր թեմաները և կարող են իրականացվել սովորողների կողմից ուսուցչի ուղղորդմամբ և ինքնուրույն: Այս աշխատանքային գիրք-տետրը սովորողներին հնարավորություն է տալիս ավելի լավ հասկանալ, կրկնել և միավորել դասընթացի նյութը, փորձել իրենց կարողություններն ու հմտություններն ինչպես պարզ, այնպես էլ բարդ առաջադրանքներ կատարելիս:

Աշխատանքային գիրք-տետրում կան պայմանական նշաններ, որոնք հուշում են, թե տվյալ առաջադրանքի կատարման համար ինչ նյութեր են օգտագործվում: Առաջադրանքների մեծ մասը կատարվում է հավելվածում ներկայացված պատկերների միջոցով: Որոշ առաջադրանքներ նախատեսված են սովորողի անհատական թղթապանակում ներառելու համար: Վերջիններս տետրում առանձնացված են համապատասխան նշումով (մկրատի նկար և կտրման գիծ): Ներառված են առաջադրանքներ պարզից բարդ սկզբունքով:

1. Միայն մատիտով կատարվող առաջադրանքներ (4, 5):
2. Բացառապես հավելվածի նյութերով կատարվող առաջադրանքներ (1, 2, 3, 15, 16, 17, 18, 23, 24):
3. Հավելվածի նյութերով և մատիտով կատարվող առաջադրանքներ (19, 20):
4. Բարդ առաջադրանքներ՝ ծեփոնով և բնական տարբեր նյութերով (տերևներ, սերմեր և այլն):
5. Բարդ առաջադրանքներ՝ մկրատով, սոսնձով և տարբեր նյութերով:

¹ Ս. Յովսեփյան, Ա. Հարությունյան, Մ. Աղաջանյան, Լ. Վերդյան, Տեխնոլոգիա, աշխատանքային տետր, առաջին դասարան, Երևան, Տիգրան Մեծ, 2015 թ., 96 էջ:

Առաջադրանքների մեծ մասն ուղեկցվում է բացատրական նկարներով և օրինակով: Ընտրվել են այնպիսի առաջադրանքներ, որոնք պարզ են, գրավիչ և հետաքրքրություն կառաջացնեն երեխաների մոտ:

«Տեխնոլոգիայի» դասերին ԿԱՊԿ ունեցող երեխաների հետ աշխատելիս կարևոր է հետևել, որ նրանք ինքնուրույն հաղթահարեն առաջադրանքները: Անհրաժեշտության դեպքում կարելի է ավելի շատ ժամանակ հատկացնել որոշ առաջադրանքների կատարմանը: Եթե երեխան դժվարանում է կատարել որոշ առաջադրանքներ, կարելի է ընդգրկել դասարանի մյուս սովորողներին՝ դասընկերոջն օգնելու և գործընթացն առավել ներառական դարձնելու նպատակով:

❖ **Ջրույց «Շրջապատող առարկաներն ու իրերը. ի՞նչ նյութերից են դրանք պատրաստված, ովքե՞ր են դրանք պատրաստել» թեմայի շուրջ:**

Առաջին դասին ուսուցիչը զրույց է անցկացնում շրջապատող իրերի մասին: Մեզ շրջապատում են բազմաթիվ իրեր, որոնց մի մասը պատրաստվել է մարդու կողմից: Որո՞նք են բնական իրերը, և որո՞նք են պատրաստվել մարդու կողմից: Մարդիկ կատարում են տարբեր աշխատանքներ՝ տուն են կառուցում, կերակուր պատրաստում, հագուստ կարում, ավտոմեքենա նորոգում, կավից ամաններ ու փայտից կահույք պատրաստում և այլն: Այս դասի նպատակն է շրջապատող աշխարհի հետազոտումը երեխայի կողմից:

Ուսուցիչը դիմում է աշակերտներին. «Տեխնոլոգիայի դասերին դուք կսովորեք տարբեր նյութերի հետ աշխատել և դրանցից պետքական իրեր պատրաստել: Ուշադիր ուսումնասիրեք աշխատանքային տեսքի 3-րդ էջի նկարը: Ի՞նչ առարկաներ են

պատկերված և դրանցից որո՞նք են պատրաստված մարդու կողմից: Ձեզ շրջապատում է բնության կողմից ստեղծված աշխարհը, որը ձևավորվել է մարդու կողմից: Բոլորս այդ աշխարհի մի մասնիկն ենք հանդիսանում»:

Ուսուցիչն այս դասին կարող է խաղ կազմակերպել. երեխաները հերթով թվարկում են բնական իրերի անունները: Ով հապաղում է և կանգ առնում, դուրս է գալիս խաղից: Հաղթում է վերջում մնացած մասնակիցը: Դրանից հետո նույն կանոններով կազմակերպվում է խաղ «Թվարկի՛ր մարդու կողմից պատրաստված իրերը» խորագրով: ԿԱՊԿ ունեցող երեխաները կարող են մատնանշել բնական իրերը. կարելի է հուշող հարցեր տալ և վերջում ամփոփել: Կրկնողությունը կօգնի բոլոր սովորողներին ավելի լավ յուրացնել նյութը:

Առաջադրանք 1. Գտի՛ր այն մասնագետին, ով պատրաստել է նկարում պատկերվածը (հավելված 1):

Այս առաջադրանքը կապված է նախորդ նյութի հետ: Սովորողն արդեն դիտել է որոշակի մասնագիտությունների տիրապետող մարդկանց նկարներ, ովքեր պատրաստում են որոշակի իրեր, և սվյալ իրի նկարը՝ կողք կողքի: Ուսուցիչը պատմել է տարբեր մասնագիտությունների մասին, ասել, թե ով ինչ է պատրաստում: Տվյալ աշխատանքը կատարելու համար հարկավոր է հավելվածի կաշուն նկարները փակցնել համապատասխան իրի պատկերի կողքի ուղղանկյուն շրջանակների մեջ:

Առաջադրանքի նպատակն է զարգացնել ուշադրությունը, հիշողությունը և պատկերացումը, ձևավորել գիտելիքներ տարբեր մասնագիտությունների մասին:

Եթե երեխան դժվարանում է ճիշտ ընտրել հավելվածի նկարները, առաջարկում ենք կազմակերպել աշխատանք զույգերով. դասարանի աշակերտներից մեկը կանվանի

մասնագետի անունը, իսկ ԿԱՊԿ ունեցող երեխան կգտնի նրա նկարը հավելվածից և կփակցնի համապատասխան մասում:

Առաջադրանք 2. Առարկաները փակցրո՛ւ համապատասխան մասերում (հավելված 2):

Առաջադրանքը կապված է շրջապատող աշխարհի մասին գրույցի հետ: Երեխան պետք է միմյանցից տարբերի բնական և մարդու կողմից ստեղծված իրերը: Հարկավոր է հավելվածի կաշուն նկարները փակցնել ճիշտ տեղում՝ տրված օրինակի շարունակությամբ:

Կատարելով այս առաջադրանքը՝ երեխան ամրապնդում է իր գիտելիքները բնական և մարդու կողմից պատրաստված իրերի մասին: Առաջադրանքի նպատակն է զարգացնել ուշադրությունը, հիշողությունը և պատկերացումը, այն ձևավորում է գիտելիքներ բնական և արհեստական նյութերի մասին: Երեխան կարողանում է դասակարգել նյութերն ըստ դրանց պատրաստման եղանակի:

Եթե սովորողը դժվարանում է ճիշտ ընտրել հավելվածի նկարները, նրան կարող են օգնել կա՛մ ուսուցիչը, կա՛մ համադասարանցին: Կարելի է վերցնել իրական առարկաներ դասասենյակից կամ բակից և երեխայի հետ միասին ուսումնասիրել բնական և մարդու կողմից պատրաստված իրերը, ընդգծել դրանց առանձնահատկությունները, հետո միայն անցնել առաջադրանքի կատարմանը՝ մեկնաբանելով յուրաքանչյուր պատկերի ծագումը:

Առաջադրանք 3. Ընտրի՛ր համապատասխան նյութերի նկարները և փակցրո՛ւ ճիշտ տեղերում (հավելված 3):

Տրված են երկու աղյուսակներ, մեկը՝ բնական նյութերի համար, մյուսը՝ արհեստական: Աղյուսակներն իրենց հերթին ունեն

վանդակներ, որոնցում որևէ նյութի մեկական օրինակ է պատկերված: Երեխան պետք է հավելվածից ընտրի նման նյութերի կաշտն նկարները և փակցնի օրինակների կողքին:

Այս առաջադրանքն առաջին հերթին զարգացնում է երեխայի տեսողական ընկալումը, ուշադրությունը: Այն ընդլայնում է գիտելիքները տարբեր նյութերի մասին:

Ինչպես և նախորդ առաջադրանքներում, առաջարկում ենք կազմակերպել գույգերով կամ խմբային աշխատանք: Դասընկերները կարող են առավել մանրամասն բացատրել թեման և օգնել ավարտել առաջադրանքը: ԿԱՊԿ ունեցող սովորողի պատկերացումներն առավել հստակեցնելու նպատակով կարելի է ունենալ բոլոր պատկերներին համապատասխան իրերը և սովորողին հնարավորություն տալ նաև շոշափելով ծանոթանալ դրանց առանձնահատկություններին, հետո միայն կատարել առաջադրանքը:

Առաջադրանք 4.

ա) Ուշադիր նայի՛ր այս առարկաներին և ասա՛, թե ինչո՞վ են նման:

բ) Նշի՛ր, թե դրանցից որո՞նք են պատրաստված մարդու կողմից:

Առաջադրանքում վանդակների մեջ գույգերով պատկերված են որևէ հատկանիշով միմյանց նմանություն ունեցող առարկաներ, որոնցից մեկը բնական է, իսկ մյուսը պատրաստված է մարդու կողմից: Առաջադրանքը բաղկացած է երկու մասից: Սկզբում ուսուցիչը երեխաների ուշադրությունը կենտրոնացնում է միևնույն վանդակում պատկերված առարկաների նմանության վրա: Երեխաները թվարկում են առաջին հայացքից ակնհայտ նմանությունները:

Առաջադրանքի երկրորդ մասում հարկավոր է մատիտով նշել այն առարկային համապատասխանող վանդակը, որը պատրաստվել է մարդու կողմից:

Այս առաջադրանքը զարգացնում է երեխաների վերլուծական մտածողությունը, ուշադրությունը: Այն ամրապնդում է նրանց գիտելիքները բնական և մարդու կողմից ստեղծված իրերի մասին:

Առաջադրանք 5. Ներկի՛ր տերևները քո նախընտրած գույներով:

Ուսուցիչը հանձնարարում է ներկել տերևները, միաժամանակ կարող է հուշել, որ դրանք ներկեն աշնանային գույներով: Առաջադրանքը հանձնարարելուց առաջ ցանկալի է կազմակերպել էքսկուրսիա դեպի մոտակա այգին կամ ուղղակի դպրոցին կից որևէ կանաչապատ տարածք, հավաքել տերևներ, ուսումնասիրել դրանց գույները, այնուհետև սովորողներին առաջարկել գունավորել առաջադրանքի գծապատկերները:

Առաջադրանքի նպատակն է զարգացնել երևակայությունը, հիշողությունը, ստեղծագործական ունակությունները, մանր շարժունակությունը:

Առաջադրանք 6. Հավաքի՛ր գեղեցիկ տերևներ և չորացրո՛ւ հաջորդ դասերի համար:

Այս առաջադրանքի կատարման համար հարկավոր է երեխաներին մանրամասն բացատրել տերևների չորացման հաջորդական քայլերը: Չորացած տերևները երեխաները պետք է նախապես հավաքեն հաջորդ առաջադրանքները կատարելու համար: Ուսուցիչը կարող է դասի ժամին նրանց տանել էքսկուրսիա դեպի մոտակա այգի: Կարևոր է, որ երեխաներին այս դասի ընթացքում տեղեկություններ հաղորդվեն տարբեր ծառատեսակների մասին: Ուսուցիչը նրանց ցույց է տալիս տարբեր եզրագծերով տերևները և անվանում համապատասխան ծառի անունը: Տվյալ առաջադրանքը միջառարկայական կապ ունի «Ես և շրջակա աշխարհը» դասընթացի հետ: Երեխաների ստացած

գիտելիքներն ամրապնդելու համար դասարանում կարելի է խաղ կազմակերպել. ԿԱՊԿ ունեցող սովորողներին կարելի է տալ ծառերի պատկերներ՝ համապատասխան տերևներով: Այնուհետև ուսուցիչը տերևների կույտից վերցնում է պատահական մի տերև և հարցնում. «Երեխանե՛ր, ո՞վ կասի, սա ո՞ր ծառից է ընկել»: Երեխաները կարող են հարցի ժամանակ բարձրացել ճիշտ ծառի պատկերը, անվանումը չհիշելու դեպքում կարող են հուշել դասընկերները կամ ուսուցիչը: Ով ավելի արագ և ճիշտ պատասխանի, նրան խրախուսական պայմանանշան կտրվի:

Առաջադրանք 7. Քո հավաքած չորացրած տերևներից մի քանիսը փակցրո՛ւ այստեղ:

Չորացրած տերևները կարելի է փակցնել սոսնձով կամ ծեփոնով: Եթե երեխան դժվարանա աշխատել նշված նյութերով, ապա առանձին դեպքերում կարելի է թույլ տալ օգտագործել երկկողմանի կաշուն ժապավեն:

Այս առաջադրանքը կարևոր է ձեռքի մատների մանր մկանների շարժունակության զարգացման համար: Առաջադրանքի կատարումը կնպաստի երեխաների մոտ պարզ աշխատանքներ կատարելու որոշակի հմտությունների ձևավորմանը: Առաջադրանքի կատարման ժամանակ կարևոր է հուշել երեխային, որ այնպես աշխատի, որ չփշրի չորացած տերևը: Տարածական կողմնորոշման դժվարություններ ունեցող սովորողներին ևս կարելի է աջակցել՝ հուշելով, թե ինչպես տեղադրել փակցվող տերևները՝ զուգահեռ ամրապնդելով հետևյալ հասկացությունների ընկալումն ու կիրառումը՝ վերև, ներքև, մեջտեղ, աջ, ձախ, միջև և այլն:

Առաջադրանք 8. Քո հավաքած տերևներով պատրաստի՛ր կոմպոզիցիաներ ըստ պատկերների, մատիտով լրացրո՛ւ դրանք:

Այս առաջադրանքը կատարելու համար հարկավոր է ունենալ հետևյալ չորացրած տերևները և սերմերը.

- ա) Թիթեռի պատրաստման համար՝ բարդու կամ նմանատիպ այլ ծառի չորս կլորավուն տերև:
- բ) Բադիկի պատրաստման համար՝ 1 բարակ, երկար տերև բադիկի վզի համար (օրինակ՝ ուռենու), մեկական մեծ ու փոքր կլորավուն տերևներ՝ մարմնի համար, իսկ պոչի համար կարելի է օգտագործել կեչու, կաղնու կամ նմանատիպ կառուցվածք ունեցող 1 տերև:
- գ) Կրիայի պատրաստման համար՝ 1 մեծ կլորավուն տերև մարմնի համար, 4 մանր տերև կամ թխկու սերմեր:
- դ) Եղջերուի պատրաստման համար՝ բարդու, կաղնու տերևներ, թխկու սերմեր:

Առաջադրանքը բաղկացած է երկու մասից: Սկզբում հարկավոր է մատիտով նկարել կետագծերով տրված պատկերը և ներկել ըստ օրինակի: Դրանից հետո հարկավոր է գծերի ուղղությամբ փակցնել համապատասխան տերևները և սերմերը:

Այս առաջադրանքի նպատակն է ձևավորել գիտելիքներ տարբեր ծառատեսակների մասին, զարգացնել ուշադրությունը, պատկերացումը և ստեղծագործական ունակությունները:

Եթե երեխան դժվարանում է կատարել այս առաջադրանքը, ուսուցիչը կարող է ընդգրկել դասարանի մյուս աշակերտներին: ԿԱՊԿ ունեցող երեխան կարող է մատիտով ներկելու աշխատանքները կատարել, սոսնձով փակցնել տերևները, իսկ դասընկերները կարող են օգնել ընտրել անհրաժեշտ տերևները, հաշվել դրանք, նկարագրել:

Առաջադրանք 9. Նկարները փակցրո՛ւ համապատասխան գույների ֆռամիրանի վրա, կտրի՛ր եզրագծով և, օգտվելով նկարից, սոսնձով հավաքի՛ր կոմպոզիցիա (հավելված 4):

Առաջադրանքը փոխարինում է Տեխնոլոգիայի աշխատանքային տետրի փրփրապլաստով աշխատանքին [1, էջ 14]:

Ֆռամիրանը փափուկ նյութ է, որով հեշտ է աշխատելը: Առաջադրանքը կատարվում է հետևյալ հաջորդականությամբ. հավելվածի կաշուն նկարները փակցվում են համապատասխան գույների ֆռամիրանների վրա, այնուհետև եզրագծերով կտրվում մկրատով: Տետրի մեջ կետագծերով ներկայացված է հավաքվող նկարի տեսքը: Հարկավոր է սկզբում սոսնձով փակցնել լիճը, վրան փակցնել նավակն իր մնացած մասերով, հետո՝ ծառը և արևը: Ուսուցիչը կարող է առաջարկել, որ երեխաներն այլ առարկաներ ևս ավելացնեն, օրինակ՝ խոտ, ծաղիկ, թիթեռ և այլն:

Առաջադրանքը ձևավորում է տարբեր նյութերի հետ աշխատելու հմտություններ: Այն զարգացնում է ստեղծագործական ունակությունները, երևակայությունը, գեղագիտական ճաշակը:

Աշխատանքը կարող է մի փոքր բարդ լինել ԿԱՊԿ ունեցող երեխաների կողմից ինքնուրույն կատարելու համար: Այդ դեպքում հարկավոր է հանձնարարել, որ երեխաներն աշխատեն զույգերով. սովորողներից մեկը կօգնի կատարել առաջադրանքի այն մասը, որը կատարվում է մկրատով և սոսնձով, իսկ ԿԱՊԿ ունեցող երեխան հավելվածի կաշուն նկարները կփակցնի ֆռամիրանի վրա:

Առաջադրանք 10. Նկարների վրա ծեփոնի օգնությամբ ամրացրո՛ւ սերմերը, այնուհետև ամբողջացրո՛ւ՝ պատկերները:

ա) «Ոգնի»

բ) «Ձուկ»

Առաջադրանքը կատարելու համար հարկավոր են տարբեր սերմեր և ծեփոն: Այս առաջադրանքները պատրաստի վիճակում

ծավալուն են լինելու, դրա համար նախատեսված է նախօրոք էջերը մկրատով կտրել: Պատրաստի աշխատանքները կարող են պահվել սովորողի անհատական թղթապանակում: Ոգնու պատկերը կետագծով բաժանված է երկու մասի՝ մարմին և դեմք: Սկզբում հարկավոր է մատիտով ներկել դեմքի հատվածը, ապա նկարի օրինակով ծեփոնից պատրաստել քիթը, աչքերն ու բերանը: Մարմնի հատվածում հարկավոր է զգուշորեն ծեփոն քսել այնպես, որ եզրագծերից դուրս չգա, այնուհետև վրան շարել արևածաղկի, դդմի կամ ձմերուկի սերմեր: «Փշերը» ձևավորելուց հետո ծեփոնով կարելի է պատրաստել պարզ մրգեր կամ սունկ, որը հարկավոր է ամրացնել ոգնու փշերի վրա:

Ձուկը պատրաստելու համար մեր կողմից բերված օրինակում օգտագործվել են բրինձ, հնդկաձավար, դեղին ոլոռ և վարսակի փաթիլներ: Ուսուցիչը կարող է երեխաներին առաջարկել այն պատրաստել իրենց նախընտրած սերմերից ու հատիկներից:

Այս առաջադրանքի նպատակն է նպաստել երեխաների մատների մանր մկանների շարժունակության զարգացմանը, ձևավորել պարզ աշխատանքներ կատարելու հմտություններ:

Ինչպես նախորդ առաջադրանքը, սա ևս նախընտրելի է կազմակերպել գույզերով՝ դասարանի մյուս աշակերտների հետ: ԿԱՊԿ ունեցող երեխան կարող է ծեփոնից մրգեր պատրաստել և թղթի վրա քսել ծեփոնը, իսկ իր դասընկերը կօգնի ամրացնել սերմերը կամ հակառակը:

Առաջադրանք 11. Ծեփոնով պատրաստի՛ր ծիածան:

Առաջադրանքը կատարվում է ծեփոնով: Հարկավոր է նկարի վրա նշված գույների ծեփոններից բարակ գլաններ պատրաստել և նշված մասերում թղթին սեղմելով՝ կառուցել ծիածան: Կարելի է առաջարկել երեխաներին, որ նրանք սկզբում գունավոր

մատիտներով ներկեն ծիածանը, ապա վրան ծեփոն կպցնեն: Այս առաջադրանքը զարգացնում է երեխաների մատների մանր մկանների շարժունակությունը, նպաստում տեսողական ընկալման զարգացմանը: Այն երեխաների մոտ ձևավորում է աշխատանքային տարրական հմտություններ: Եթե երեխան դժվարանում է բավականաչափ երկար գլան պատրաստել, կարելի է առաջարկել ծեփոնը մաս-մաս փակցնել անհրաժեշտ զուլում:

Առաջադրանք 12. Ուսումնասիրի՛ր թղթի հատկությունները:

Առաջադրանքը նպատակաուղղված է երեխայի ուշադրության, վերլուծական կարողության և տրամաբանության զարգացմանը: Նրան առաջարկում են թղթի հետ կապված տարբեր գործողություններ կատարել և հետևություններ անել թղթի հատկությունների մասին: Առաջադրանքը կատարելու համար հարկավոր է ունենալ տարբեր որակների թղթեր՝ հաստ, բարակ, ներծծվող, ամուր և այլն:

ա) Փորձի՛ր թուղթը պատռելով հավասար մասերի բաժանել:

Առաջադրանքի այս հատվածում առաջարկվում է թուղթը պատռելով բաժանել հավասար մասերի: Ուսուցիչը կարող է երեխաներին տարբեր հաստության թղթեր (տետրի թուղթ, անձեռոցիկ, հաստ սովարաթուղթ) բաժանել և առաջարկել համեմատել, թե ո՞ր թուղթն է ավելի հեշտ պատռվում, կամ դրանցից ո՞րն է ավելի հեշտ հավասար մասերի բաժանվում: Խորհուրդ է տրվում ընտրել համապատասխան ածականներ և նկարագրել թղթի որակն ու գործողությունը կատարելու ընթացքը:

բ) Թղթի կտորներից գնդիկներ պատրաստի՛ր:

Այս առաջադրանքի համար ևս հարկավոր է երեխաներին տալ տարբեր հաստության թղթեր և առաջարկել, որ ճմռթելով գնդիկներ

պատրաստեն, ապա ստացված գնդիկները համեմատեն՝ ո՞րն է ավելի փոքր, կամ ո՞րն է ավելի հարթ ստացվել: Այս առաջադրանքի կատարման ժամանակ ևս կարևոր է բառապաշարի հարստացմանն ուղղված աշխատանքների իրականացումը՝ նկարագրական բառերի կիրառման միջոցով: Աուտիզմ կամ զգայական խնդիրներ ունեցող երեխաները, հնարավոր է, խուսափեն կատարել այս վարժությունը՝ կապված գերզգայունության հետ, ուստի նրանց կարող էք առաջարկել թաց տարբերակով գնդիկներ պատրաստելու եղանակը:

զ) Թուղթը ծալի՛ր հավասար մասերի:

Այս առաջադրանքի համար կարելի է բաժանել նշումների համար նախատեսված փոքր թղթեր՝ մոտավորապես 10 x 10 սմ² չափի: Հարկավոր է թուղթը մեջտեղից հավասար ծալել: Առաջադրանքի կատարումը որոշակի հմտություններ կձևավորի, որոնք նրանք կօգտագործեն հաջորդ դասերին թղթից պարզ օրիգամիներ պատրաստելու համար: Աշխատանքն ավելի հեշտացնելու նպատակով կարելի է մի քանի անգամ ցույց տալ առաջադրանքը կատարելու եղանակը:

դ) Թուղթը ոլորելով՝ պարան պատրաստի՛ր: Ո՞ր թղթից ավելի բարակ պարան կստացվի:

Այս առաջադրանքի համար նախ երեխաներին կարելի է տալ բարակ թուղթ, օրինակ՝ անձեռոցիկ, որպեսզի նրանք սկզբում հեշտությամբ կարողանան ոլորել թուղթը: Այնուհետև ուսուցիչը կառաջարկի նույն գործողությունը կատարել տեսրի թղթով և սովորաթղթով: Երբ երեխաները տարբեր տեսակի թղթերից ոլորած պարաններ պատրաստեն, ուսուցիչը կկազմակերպի քննարկում, թե ո՞ր թղթից ստացվեց ամենաբարակ պարանը և ո՞ր

թղթից էր ավելի հեշտ պատրաստելը: Մանր մկանների շարժունակության խնդիրներ ունեցող սովորողներին անհրաժեշտ կլինի ավելի շատ ուղղորդում ուսուցչի կամ ուսուցչի օգնականի կողմից: Աշխատանքի կատարման ընթացքում կրկին ուշադրություն է հատկացվում առարկաները և գործողությունները բնութագրող բառերի կիրառմանը:

ե) Ջրի մեջ թրջելով՝ համեմատի՛ր թղթի տարբեր տեսակները: Ո՞րն է ավելի շուտ թրջվում:

Այս առաջադրանքը երեխաները կարող են կատարել գույգերով: Յուրաքանչյուր սեղանին դրվում է ջրով լի բաժակ, և երեխաներին բաժանվում են տարբեր հաստության թղթի կտորներ՝ 5 x 5 սմ² չափերի: Թուղթը ընկղմում են ջրի մեջ և որոշ ժամանակ պահում (օրինակ՝ հաշվում են մինչև 10-ը): Այդպես վարվում են բոլոր թղթերի կտորների հետ և սկսում համեմատել թրջված մասերը: Այս առաջադրանքը զարգացնում է երեխաների վերլուծական մտածողությունը, ուշադրությունը, ձևավորում նրանց մոտ հետազոտելու, եզրահանգումներ անելու հմտություններ: Մասնակից սովորողները կարող են ներկայացնել, թե ինչ տարբերություններ նկատեցին տարբեր թղթի կտորներով աշխատելիս: Խոսելու հետ կապված դժվարություններ ունեցող սովորողները կարող են ժեստերով կամ այլ ձևերով արտահայտել զգացողությունը: Մա թույլ կտա ուսուցչին նաև հասկանալ՝ արդյո՞ք դուր եկավ գործողությունը սովորողին կամ որքանո՞վ նրան հետաքրքրեց դասը:

զ) Թղթի կտորներն ընկղմի՛ր տարբեր գույներով ներկված ջրի մեջ: Ի՞նչ տեղի ունեցավ:

Ցանկալի է, որ այս առաջադրանքը ևս երեխաները գույգերով կատարեն: Նրանց սեղանին դրվում է 2 բաժակ ջուր՝ ներկված

տարբեր գույներով (ջուրը ներկելու համար կարելի է ջրաներկ օգտագործել) և բարակ թղթի կտորներ (նախընտրելի է անձեռոցիկ): Առաջադրանքը կարելի է ձևափոխել հետևյալ կերպ. ուսուցիչը կարող է երկու տարբեր գույների ջրերի մեջ ընկղմել միևնույն թղթի երկու ծայրերը (հարկավոր է վերցնել բարակ, հեշտ ներծծվող թուղթ) և թողնել ջրի մեջ այնքան, մինչև որ ներկերը ներծծվելով հասնեն միմյանց և միախառնվեն:

Առաջադրանքը զարգացնում է երեխաների ինքնուրույնությունը և ուշադրությունը: Այն նման է նաև փոքրիկ հետազոտական աշխատանքի, որն անկասկած կհետաքրքրի յուրաքանչյուր երեխայի:

Առաջադրանք 13. Մկրատով առանձնացրո՛ւ տարբեր գույնի քառակուսիները և օգտվելով օրինակից՝ նշված տեղերից ծալի՛ր (հավելված 5):

Հավելվածից մկրատով կտրատվում են քառակուսի գունավոր թղթի կտորներ, որոնց վրա որոշակի գծեր կան: Հարկավոր է ըստ նկարի ծալել այդ թղթի կտորները: Առաջադրանքի նպատակն է նպաստել մանր մկանների շարժունակության զարգացմանը: Երեխաների մոտ զարգանում է պատկերացումը: Նրանք սովորում են ընթերցել նկարում պատկերված սխեման, ինչը նպաստում է տարածական ընկալման զարգացմանը: Զուգահեռաբար կարելի է իրականացնել գունաձանաչողության ամրապնդմանն ուղղված աշխատանքներ՝ խնդրելով սովորողին անվանել, թե որ գույնով է աշխատում տվյալ պահին: Այն երեխաների համար, ովքեր կդժվարանան անվանել գույները, կարելի է գույների համադրման աշխատանք կատարել՝ դրանով ամապնդելով գունընկալումն ու գունաձանաչողությունը:

Առաջադրանք 14. Նախորդ առաջադրանքի գունավոր թղթի կտորները ձեռքով պատռի՛ր մանր կտորների, նկարի վրա սոսնձելով՝ գեղեցիկ ձևավորի՛ր այն:

Առաջադրանքի համար հարկավոր է նախորդ առաջադրանքից ստացված գունավոր թղթի կտորները պատռել մանր մասերի, ապա 27 էջում պատկերված տանձի և խնձորի եզրագծերի մեջ սոսնձով փակցնել համապատասխան գույնի պատռված թղթի կտորները: Առաջադրանքը նպաստում է նաև մանր մկանների շարժունակության, ստեղծագործական ունակությունների, երևակայության զարգացմանը: Մանր մկանների շարժունակության դժվարություններ ունեցող երեխաներին հարկ կլինի ավելի շատ ուղղորդել թուղթը պատռելիս: Անհրաժեշտ է հուշել երեխային, որ որքան մանր կտրատի թղթերը, այնքան ավելի հարուստ կստացվի պատկերը: Կարևոր է նաև ցուցադրել փակցնելու տեխնիկան. որոշ երեխաներ կարող են թղթի կտորներն ափով լցնել սոսնձված հատվածի վրա և ամրացնել թղթերը, մյուսները՝ փակցնել հատ-հատ: Առաջադրանքը կարելի է նաև զուգահեռաբար անվանել «թղթերի գույները»:

Առաջադրանք 15. Հավաքի՛ր նկարում պատկերված ծաղիկը (հավելված 6):

Առաջադրանքը կատարվում է հավելվածի կաշտն պատկերների միջոցով: Նայելով նկարին՝ երեխան պետք է ինքնուրույն հասկանա, թե ի՛նչ հաջորդականությամբ պետք է փակցնի ծաղիկի մասերը: Առաջադրանքի համար ընտրվել է շատ պարզ նկար, որպեսզի սովորողը կարողանա հնարավորինս ինքնուրույն կատարել այն:

Առաջադրանքը ձևավորում է տարրական աշխատանքային հմտություններ, զարգացնում է երևակայությունը, ստեղծագործական ունակությունները: Եթե երեխան դժվարանա կատարել առաջադրանքը, կարելի է մի քանի անգամ հուշել

հերթականությունը կամ հերթականությունը հուշող նշաններ կիրառել:

Առաջադրանք 16. Հավաքի՛ր նկարում պատկերված թրթուրին (հավելված 7):

Այս առաջադրանքը կատարվում է հավելվածի կաշուն գունավոր շրջանների միջոցով: Ըստ կետագծերով նշված հետագծի՝ հարկավոր է հավաքել թրթուրի նկարը: Առաջադրանքը զարգացնում է մանր մկանների շարժունակությունը, ուշադրությունը, ինչպես նաև տրամաբանությունը: Այս առաջադրանքը կատարելիս ևս, անհրաժեշտության դեպքում, կարելի է հուշել գույների հաջորդականությունը:

Առաջադրանք 17. Մրգերն ու բանջարեղենները տեղադրի՛ր իրենց տեղերում (հավելված 8):

Առաջադրանքը ճիշտ կատարելու համար երեխայի մոտ պետք է այլ առարկաներից արդեն ձևավորված լինեն որոշակի գիտելիքներ մրգերի, բանջարեղենների և այլ մշակաբույսերի մասին, որոնք մարդն օգտագործում է սննդի համար: Հարկավոր է հավելվածի կաշուն նկարներից գտնել մրգերը և փակցնել համապատասխան տեղում՝ խնձորի կողքից, իսկ բանջարեղենները՝ սմբուկի կողքից: Խոսքի զարգացման խնդիրներ ունեցող երեխաները կարող են համադրել և ցույց տալ նկարները, իսկ խոսք ունեցող երեխաները կարող են անվանել նկարները և նշել գործողության տրամաբանությունը:

Առաջադրանք 18. Հավաքի՛ր Ձմեռ պապ՝ հետևելով օրինակին (հավելված 9):

Հավելվածում կաչուն թղթի վրա տրված են Ձմեռ պապի դեմքի և գլխարկի մասերը, իսկ տետրի մեջ առանձին տեղ է հասկացված նրան հավաքելու համար: Ձմեռ պապի «հավաքման» հաջորդական քայլերը տրված են տետրում: Երեխայի ուշադրությունը կենտրոնացնելու նպատակով կարելի է առաջարկել մարմնի համապատասխան մասերը նմանեցնել երկրաչափական պատկերների:

Առաջադրանքը զարգացնում է սովորողի ուշադրությունը, տրամաբանությունը և դիտողականությունը:

Առաջադրանք 19. Պատրաստի՛ր «Նոր Տարի» կոմպոզիցիան թղթից և բամբակյա սկավառակներից (հավելված 10): Մատիտով կամ ներկերով ամբողջացրո՛ւ նկարը:

Այս առաջադրանքը կատարելու համար հարկավոր են 10 բամբակյա սկավառակներ, հավելվածի կաչուն նկարները և մատիտներ:

Տետրի 33-րդ էջում կետագծերով տրված է նկարի սխեման: Սկզբում հարկավոր է համապատասխան տեղերում փակցնել հավելվածի կաչուն նկարները: Այնուհետև շրջանների մեջ ստանձով փակցվում են բամբակյա սկավառակները: Տան կտուրի համար բամբակյա սկավառակը մկրատով կտրվում է մեջտեղից: Ձնեմարդու դեմքը և կոճակները կարելի է նկարել մատիտներով կամ ֆլումաստերով (մարկերով): Կոմպոզիցիայի մեջ կարելի է ավելացնել ձյունիկներ (բամբակից կամ թղթից): Այս առաջադրանքը կատարելիս կրկին կարելի է գուգորդումներ ստեղծել, օրինակ՝ բամբակը շրջանի նման է, սպիտակ է, ինչպես նաև փոքր-ինչ ուղղորդել աշխատանքն ավարտելու և պատկերն ամբողջացնելու համար:

Առաջադրանք 20. Հավաքի՛ր մեղու, գատիկ և բերված օրինակով ձևավորի՛ր մարգագետին (հավելված 11): Կարող ես մատիտով լրացնել բնապատկերը (խոտ, ծառ, արև և այլն):

ա) Մեղու

բ) Զատիկ

գ) Մարգագետին

Այս առաջադրանքի համար տետրի 35-րդ էջում հատուկ տեղ է հատկացված, որտեղ արդեն նկարված են մեղվի և գատիկի «հիմքերը», որոնց վրա հավելվածի կպչուն նկարներով պետք է հավաքել պատկերները: Քայլերի հաջորդականությունը, ինչպես նաև պատկերի ամբողջական տեսքը տրված է 34-րդ էջում: Կարելի է հանձնարարել գունավոր մատիտներով լրացնել պատկերը՝ նկարելով ծաղիկների ցողուններն ու տերևները, խոտեր, ծառ, արև և այլն: Որպես ուղղորդում՝ կարելի է առաջարկել օգտվել վերևում նշված օրինակից՝ կրկին ընդհանրացնելով գույներն ու երկրաչափական պատկերները:

Այս առաջադրանքը զարգացնում է ստեղծագործական ունակությունները, նպաստում գեղագիտական ճաշակի զարգացմանը:

Առաջադրանք 21. Մկրատով կտրի՛ր շրջանները և դրանցից պատրաստի՛ր հավիկներ, կարմիր և սև մատիտներով ամբողջացրո՛ւ պատկերը (հավելված 12): Հավաքի՛ր կոմպոզիցիա և ընկերոջդ հետ հորինի՛ր կարճ պատմություն նրանց մասին: Հավիկներով կոմպոզիցիա

Այս առաջադրանքը կատարվում է մկրատով: Հարկավոր է եզրագծով կտրել 2 հավիկների համար նախատեսված շրջանները և 2 ձվիկները: Հավիկները պատրաստվում են նշված տեղից կտրվածք անելով և ծալելով: Ստացված տարածական պատկերը ստանձով

փակցվում է 37 էջում «Հավիկներով կոմպոզիցիային» հասկացված դատարկ մասում: Հարկավոր է կարմիր մատիտով լրացնել հավիկի պատկերը՝ նկարել կտուցը և կատարը: Նույն էջում ստանձով փակցվում են նաև ձվիկները:

Դժվարացող սովորողներին կարող է օգնել ուսուցիչը: Մանր մկանների շարժունակության դժվարություններ ունեցող սովորողներին անհրաժեշտ կլինի ավելի շատ ֆիզիկական ուղղորդում կամ պատրաստի օրինակների տրամադրում:

Հնարավորության դեպքում ուսուցիչը հանձնարարում է երեխաներին հորինել կարճ պատմություն դրանց մասին: Պատմությունների համար կարելի է օգտվել թեմատիկ պատկերներից կամ երեխաներին հիշեցնել «Ոսկե ձվիկի» հեքիաթը և միասին պատմել այն:

Առաջադրանք 22. Պատրաստի՛ր տոնական բացիկներ՝ նշված օրինակով (հավելված 13):

Այս առաջադրանքը կատարելու համար հավելվածում տրված են գունավոր էջ և կաշտն նյութեր՝ տարբեր առարկաներ պատկերելու համար (ծաղիկ, թիթեռ): Սովորողը պետք է նշված տեղերից մկրատով կտրի գունավոր թուղթը, ապա ծալի նշված տեղից և կաշտն նյութերով ձևավորի բացիկները: Մտացվում է ընդամենը 2 բացիկ: Ձևավորելու համար հավելվածում կան 2 թիթեռի և 2 ծաղկի մասեր: Մանր մկանների շարժունակության դժվարություններ ունեցող սովորողներին կրկին անհրաժեշտ կլինի ավելի շատ ֆիզիկական ուղղորդում կամ պատրաստի օրինակների տրամադրում:

Այս առաջադրանքը նպատակահարմար է հանձնարարել որևէ տոնի նախօրեին: Երեխաները կարող են նաև մատիտով նկարագարողել բացիկը: Կարելի է երեխաների հետ քննարկել, թե

ում կարող են նվիրել բացիկը, ինչ կարելի է գրել բացիկի մեջ, ինչպես ձևակերպել մտքերը:

Առաջադրանք 23. Պատրաստի՛ր թելափունջ բերված օրինակով:

Այս առաջադրանքի նպատակն է սովորողի մոտ զարգացնել պարզ աշխատանքային գործողություններ կատարելու հմտությունները, զարգացնել մանր մկանների շարժունակությունը:

Առաջադրանքը կատարելու համար հարկավոր է հաստ թել և սովարաթղթի մի փոքր կտոր: Թելափնջի պատրաստման հաջորդականությունը ներկայացված է քայլերով.

1. սկզբում սովարաթղթի կտորի վրա բազմակի փաթաթել թելը,
2. մոտ 10 սմ երկարությամբ մեկ այլ թելի կտոր անցկացնել փաթաթված թելափնջի միջով և կապել,
3. ներքևի մասից մկրատով կտրել թելափունջը,
4. նկարում պատկերված տեղից մեկ այլ թելի կտորով կապել ստացված թելափունջը:

Եթե այս առաջադրանքը երեխան չկարողանա ինքնուրույն կատարել, դրա փոխարեն կարելի է նրան հանձնարարել, որ թելի վրա պարզ հանգույց կապի: Առաջադրանքը կարող է կատարել դասընկերոջ օգնությամբ, իսկ ԿԱՊԿ ունեցող երեխան, հետևելով ընթացքին, կարող է օգնել կապել հանգույցները կամ փաթաթել թելը: Հնարավոր է, որ առաջադրանքը կատարելու համար ավելի շատ օրինակի ներկայացման կամ ֆիզիկական ուղղորդման կարիք լինի:

Առաջադրանք 24. Համապատասխան պարագաներով սպասքաղրի՛ր թելի սեղանը (հավելված 14):

Առաջադրանքի կատարման համար տեսրում պատկերված դատարկ սեղանի վրա հարկավոր է ճիշտ փակցնել հավելվածի

պատկերները: Ուսուցիչը կարող է առաջարկել սովորողին՝ մատիտով նկարելով լրացնել սպասքաղրման համար անհրաժեշտ պարագաները: Առաջադրանքը ձևավորում է գիտելիքներ սեղանի շուրջ վարվեցողության կանոնների վերաբերյալ, զարգացնում է ուշադրությունը և վերլուծական մտածողությունը:

Եթե երեխան դժվարանա կատարել այս առաջադրանքը, ապա ուսուցիչը կամ դասընկերներից մեկը կարող են թվարկել առարկաների անունները, իսկ ԿԱՊԿ ունեցող երեխան հավելվածից կրերի համապատասխան նկարը և կփակցնի սեղանի նկարի վրա: Կարելի է նաև մինչև առաջադրանքին անցնելը թեմային առնչվող հարցեր ուղղել սովորողներին, օրինակ՝ ու՞մ հետ ես սիրում թեյ խմել, ի՞նչ ես ուտում թեյի հետ: Սա հնարավորություն կտա առաջադրանքը կապել իրական կյանքի հետ:

Առաջադրանք 25. Համապատասխան պարագաներով սպասքաղրի՛ր սուրճի սեղանը (հավելված 15):

Առաջադրանքը նման է նախորդին այն տարբերությամբ, որ այն վերաբերում է սուրճի սեղանի սպասքաղրմանը:

Վերջին երկու առաջադրանքների կատարումը կարելի է իրականացնել նաև գործնական տարբերակով՝ իրականում սուրճի կամ թեյի սեղանի սպասքաղրումով, որին կմասնակցեն դասարանի բոլոր սովորողները:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ս. Հովսեփյան, Ա. Հարությունյան, Մ. Աղաջանյան, Լ. Վերդյան, Տեխնոլոգիա, Աշխատանքային տետր, Առաջին դասարան, Երևան, Տիգրան Մեծ, 2015թ., 96 էջ
2. Սվազյան Ա. Հ. և ուր., Արդյունավետ հարմարեցումներ, Որակյալ կրթություն, Մեթոդական ուղեցույց, Ձեռնարկ, Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, Երևան, 2022, 142 էջ
3. Սվազյան Ա. Հ., Միքայելյան Ա. Վ., Բարսեղյան Մ. Ս., Պետրոսյան Ս. Ս., Ուսումնական նյութերի հարմարեցումներ: «Մայրենի 1» և «Մաթեմատիկա 1» աշխատանքային գիրք-տետրերի մեթոդական ուղեցույց ուսուցիչների համար, Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, Եր., 2022, 128 էջ
4. Узорова О. В., Нефедова Е. А. Технология, 1 класс: учебник. – М. Дрофа; Астрель, 2016.-174 с.
5. Assessing the Needs of Bilingual Pupils: Living in two languages, David Fulton Publishers QCA, 2000, A Language in Common: Assessing English as an additional language QCA, 2009.
6. Davis, P and Florian, L, 2004, Teaching Strategies and Approaches for Pupils with Special Educational Needs: A Scoping Study, DfES Research Report RR516 Hall, D, 2001.
7. Including students with SEN and/or disabilities in secondary design and technology. Training toolkit. Training and Development Agency for Schools DOI:
<https://dera.ioe.ac.uk/13789/1/designandtechnology.pdf>
8. Mondaini, G., Rosciani, M. (2021). Adaptive Environments. New Spaces for Learning. In: Scaradozzi, D., Guasti, L., Di Stasio, M., Miotti, B., Monteriù, A., Blikstein, P. (eds) Makers at School, Educational Robotics and Innovative Learning Environments. Lecture

Notes in Networks and Systems, vol 240. Springer, Cham.
https://doi.org/10.1007/978-3-030-77040-2_49

9. Pearson, F.. 2019. “Structuring Design and Technology for Pupils with Learning Difficulties”.
10. Planning, Teaching and Assessing the Curriculum for Pupils with Learning Difficulties: Design and technology.
11. Special Educational Needs: The Warnock Report, H.M.S.O.,
12. <https://www.arlis.am/documentview.aspx?docid=67166>
13. <https://www.arlis.am/documentview.aspx?docID=152960>
14. <https://www.arlis.am/documentview.aspx?docID=140362>
15. <https://escs.am/am/news/13529>
16. <https://www.gov.uk/government/organisations/ofsted>
17. www.data.org.uk
18. www.immersiveeducation.com– a selection of resources to aid teaching
19. www.widgit.com – a selection of resources to aid teaching
20. www.qcda.gov.uk/libraryAssets/media/P_scales_Design.pdf
21. <https://www.data.org.uk/for-education/special-educational-needs/>